ով սուրբ Խանում բարեխաչանձ,
մաքուր որոյդ ըստ Հռիփսիմեանց։

Ամաց էիր ութտասան.
մոլեալ գինուորքն առ քեզ հասան.
որպէս կատաղի չար գազան.
պատքեալ ծարաւ օտար յարեան։

Ցիմարաբար չարքն համային,
եղեն մի խորհուրդ միաբան.
եդին ըզքեզ պիղծ դքսի տան.
ժանդ խըրատուն առնել հաւան։

Պատվեալ մաքուր անարատ կոյս.
մանուշակ ծաղիկ դեռաբոյս.
խաչն Ցիսուսի բարձեր ի յուս.
ի փառս մտեր, անարատ կոյս։

Երանեալ մաքուր անբիծ կոյս.
վասն իմ մաղթեաւ առ Տէրն Ցիսուս.
զի արասցէ ճար մի խըղճոյս.
ով սուրբ Խանում, ուռ նորաբոյս։

Տունկ պտղաբեր արմաւենի.
սուրբ տաղավար Տեառըն բանի.
քաջ համբերօղդ սաստիկ գանի.
սուրբ նահատակ յոյժ անուանի։

Վարանեալ ազգն աբեթիական.
միշտ յըղձային քո կատարման
հիւծեալ աւուրս այս սառուցման,
պնդութիւնդ էր անդամանդեան։

Ւանդեցեր զՀոգիդ պայծառ,
անուշահոտ խնկաբեր ծառ,
Տեառն Ցիսուսի անարատ գառ.
մըտեր յառագաստն անպատկառ։

Բամից ազգաց դու ընտրեցար,
մեզ նահատակ բարի ցուցար.